

# 2011թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ  
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՍՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Թեմայի անվանումը*

ՀՆԱ ԾԱՎԱԼԻ ԵՎ ԱՃԻ ՏԵՄՊԵՐԻ ՎՐԱ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

*Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը*

1 ՏԱՐԻ

*Հաշվետու ժամանակահատվածը*

01.01.2011թ. - 31.12.2011թ.

*Թեմայի ղեկավարը*

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

*Թեմայի մասնակիցներ*

1. Վարդանյան Գագիկ Իշխանի – ավագ գիտաշխատող
2. Սարգսյան Վարդան Ալբերտի – գիտաշխատող
3. Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի – գիտաշխատող
4. Քոչարյան Մարիանա Ռաֆիկի – կրտսեր գիտաշխատող

**Ծրագրի համառոտ բովանդակությունը**

Համախառն ներքին արդյունքի ծավալի և աճի տեմպի վրա գիտության և կրթության ներգործության գնահատման հիմնահարցն առանձնակի կարևորվում է ազգային նորամուծական համակարգի ստեղծման ու զարգացման գործում: Այս առումով կարևորվում է գիտության և կրթության ոլորտների հանրային նշանակության (պետական, մասնավոր, դրամաշնորհային) գիտական աշխատանքների և կրթական ծառայությունների ծավալի փոփոխության ուղղակի ազդեցությունը տնտեսական զարգացման ընթացքի վրա, ինչպես նաև գիտատեխնիկական առաջադիմության և կրթության իբրև տնտեսական դինամիկայի գործոնների, ներգործությունը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մշակել տնտեսության զարգացման վրա գիտության և կրթության ոլորտների ազդեցության ակտիվացման վերաբերյալ

անմիջական ներգործություն ապահովող և տևական զարգացման առաջարկություններ:

ՀՆԱ աճի վրա անմիջական (տարեկան լազոյ) ազդեցության համար էական են նորամուծական և գիտահետազոտական ոլորտներում, մարդկային կապիտալում ներդրումները, միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ դրամաշնորհային ծրագրերի ընդլայնումը, կորպորատիվ բնույթի նորամուծական, գիտակոնստրուկտորական մշակումներում ներդրումները: Դրանք ուղղակիորեն մեծացնում են ՀՆԱ-ի ծավալը և աճի տեմպը:

ՀՆԱ-ի աճի վրա հեռանկարային ազդեցությունը դրսևորվում է երկարատև ժամանակահատվածում նոր տեխնիկայի ստեղծման ու ներդրման և բարձր որակավորման մասնագետների պատրաստման, երկրի մրցունակության մակարդակի բարձրացման միջոցով:

### **Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**

Ծրագրի շրջանակներում նպատակադրվում է ունենալ՝

- տնտեսության մեջ գիտելիքի ներդրանքի գնահատման տեսամեթոդաբանական մոտեցումների մշակում,
- գիտական գիտելիքի ստեղծմանը, տարածմանը, արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև գիտական գիտելիքն արժեքի վերածմանը նպաստող ազգային նորաստեղծական համակարգի հայեցակարգային մոտեցումների մշակում,
- գիտական գիտելիքի ստեղծմանը, տարածմանը, արդյունավետ օգտագործմանը նպաստող ինստիտուցիոնալ համակարգի և տնտեսական պայմանակարգի կատարելագործման մեխանիզմների վերաբերյալ առաջարկությունների մշակում,
- գիտություն-կրթություն-տնտեսություն կապերի արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկությունների մշակում:

### **Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**

Ծրագրի արդյունքների հիման վրա կնախապատրաստվի.

- հաշվետվություն գիտահետազոտական աշխատանքի մասին՝ համաձայն միջպետական GOCT 7.32-2001-ի,
- զեկույց՝ «Հայաստանի տնտեսության գիտելիքահենք հատվածները» թեմայով: